ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 13.04.2026թ.
Ժամը 15^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ՝ Ա. Ասատրյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի ավագ սպա՝ Խ. Երիցյան,
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ՝ Վ. Ծատրյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԱԷՅ» ՍՊ ընկերության՝ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու վերաբերյալ.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԱԷՅ» ՍՊ ընկերության՝ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու վերաբերյալ.

(Գ. Պողոսյան)

1.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքում «ԱԷՅ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի՝ 19.03.2026թ. որոշմամբ ընթացակարգի 33-րդ, 35-րդ, 36-րդ, 44-րդ և 58-րդ չափաբաժինների մասով ճանաչվել էր ընտրված մասնակից: 02.04.2026թ. «ԱԷՅ» ՍՊԸ-ին armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5 կետերի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: «ԱԷՅ» ՍՊԸ-ն վերը նշված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները (ընդհանրապես չի ներկայացրել):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովի 13.04.2026թ. որոշմամբ՝ «ԱԷՅ» ՍՊԸ-ն զրկվում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի 33-րդ, 35-րդ, 36-րդ, 44-րդ և 58-րդ չափաբաժինների մասով պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

2.1 13.04.2026թ.՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ընթացակարգի 8.20 կետը, որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա, ընթացակարգի 35-րդ և 36-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «Տենդեր Գրուպ» ՍՊԸ-ին, իսկ 44-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց՝ «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

2.3 Քանի որ, հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացված գինը 33-րդ չափաբաժնի մասով գերազանցում է գնումն իրականացնելու համար նախատեսված գնման գինը, իսկ 58-րդ չափաբաժնի մասով միակ հայտ ներկայացրած մասնակիցը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը (պայմանագիր չի կնքվում) գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը վերը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-1/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)՝ Ա. Ասատրյան

Գնահատող՝ Խ. Երիցյան

Գնահատող՝ Վ. Ծատրյան

Գնումները համակարգող՝ Գ. Պողոսյան